

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N 41/2

ք.Երևան

13 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 18.05.2018թ. N4101005 ակտի դեմ Ա/Ձ Արթուր Շամիրյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ա/Ձ Արթուր Շամիրյանը հայտնում է, որ զբաղվում է ապրանքների մանրածախ վաճառքով՝ իրեն պատկանող մթերային խանութում: Աշխատում է օրենքով և հաճախորդներին մշտապես տրամադրում է ՀԴՄ կտրոն: Միաժամանակ հայտնում է, որ սույն թվականի ապրիլի 16-ին իր խանութ է մուտեցել մի անձնավորություն, ով հետո ներկայացել է որպես հարկային տեսուչ: Երկու անգամ Ա/Ձ Արթուր Շամիրյանը տրամադրել է ՀԴՄ կտրոն, որոնք գնորդը չի վերցրել, իսկ երրորդ անգամ չի սպասել, որպեսզի իրեն սպասարկեն, և առանց վերցնելու ՀԴՄ կտրոնը, վերցրել է ապրանքն ու դուրս եկել խանութից: Վերոնշյալ դեպքից կես ժամ անց մուտեցել է հարկային տեսուչը և հայտնել է, որ Ա/Ձ Արթուր Շամիրյանը մեղադրվում է այն բանի մեջ, որ ՀԴՄ կտրոն չի տրամադրում: Չնայած, որ ցույց է տվել տրամադրված ՀԴՄ կտրոնները և բացատրել, որ վերջին առևտրի ժամանակ հաճախորդը չի սպասել, որ իրեն սպասարկեն և տրամադրեն կտրոն, քանի որ դրամարկղում տվյալ պահին աշխատող չի եղել, և պատճառաբանելով, որ երեխաներն ավտոմեքենայի մեջ սպասում են, ապրանքը վերցնել ու դուրս է եկել: Հարկային տեսչության աշխատողն ասել է, որ Ա/Ձ Արթուր Շամիրյանը պարտավոր էր տրամադրել կտրոնն անկախ ամեն ինչից և, որ կտուգանվի օրենքով սահմանված կարգով: Ա/Ձ Արթուր Շամիրյանը հայտնում է, որ ոչ մի փաստաթղթի տակ չի ստորագրել, որովհետև վերոնշյալ դեպքը բացահայտ գողություն էր:

Նշված դեպքի մասին արձագանքել են AYB NEWS կայքի լրագրողները և բացահայտել կատարվածը: Գրված նյութից հետո նա բերման է ենթարկվել անձանոթ անձանց կողմից, ովքեր ստիպել են նրան՝ հակասել գրված նյութին և կայքերում գրել, որ այն չի համապատասխանում իրականությանը, որ լրագրողների գրած նյութը սուտ է և բացարձակապես կապ չունի իրականության հետ, ինչին նա չի համաձայնել:

Ա/Ձ Արթուր Շամիրյանը հայտնում է, որ սույն թվականի մայիսին ստացել է թիվ 4101005 ակտն այն մասին, որ տուգանվում է 300.000 ՀՀ դրամի չափով:

Քանի որ կատարվածն ամբողջովին կազմակերպված և պլանավորված դեպք էր և չի խախտվել օրենքի ոչ մի կետ, այդ պատճառով բողոքաբերը խնդրում է ազատել նշանակված վարչական տուգանքից և չեղյալ համարել N 4101005 ակտը:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության պետի 17.03.2018թ. N4101005 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Արթուր Շամիրյանի մոտ կատարվել է հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 18.05.2018թ. թիվ 4101005 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել 300.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ֆիզիկական անձ Հասմիկ Ալիխանյանի /անձնագիր AG 0335476 տրված 18.08.2014թ. 007-ից/ կողմից 20.04.2018թ. Արարատի մարզի Արալեզ գյուղի Խանջյան 19 հասցեում գործող Ա/Ձ Արթուր Շամիրյանին պատկանող առևտրի կետից կատարվեց գնում 1630 դրամի չափով, 2 շիշ 0.5 լ տարողությամբ ԿՈԿԱ ԿՈԼԱ, 1 շիշ ՊԵՊՍԻ ԿՈԼԱ, 1 շիշ Բյուրեղ ջուր, 1 տուփ թխվածք և 1 տուփ ԿԻՆԴԵՐ շոկոլադ, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Արթուր Շամիրյանը վճարված գումարից ՀԴՄ մուտքագրեց միայն 1280 դրամը, 350 դրամ գումարը չմուտքագրեց ՀԴՄ և չտրամադրեց ՀԴՄ կտրոն:

Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և 17.04.2018թ. թիվ ՍՓ-501-Ա հրամանը՝ ծանոթացման:

Այնուհետև ժամը 13:16-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց «Z» հաշվետվություն՝ 6580 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման 350 դրամ արժեքը: Հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 350 դրամ, ժամը 13:16-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 13:16-ին նորից դուրս բերվեց «Z» հաշվետվություն՝ 6930 դրամ ընդհանուր արժեքով:

Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել է ՀՀ հարկային օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ կետի և 382 հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջները:

Արդյունքում ՀՀ հարկային օրենսգրքի 416 հոդվածի 4-րդ կետի 1-ին ենթակետով առաջադրվել է տուգանք 300000 դրամի չափով:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածով սահմանված են հսկիչ գնումների իրականացման կարգն ու պայմանները:

Օրենսգրքի 345-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված՝ հսկիչ գնումների իրականացման կարգն ու պայմանները կիրառվում են նաև հարկային մարմնի կողմից հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության թեմատիկ ստուգման ընթացքում:

Օրենսգրքի 345-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հսկիչ գնման (գնումների) արդյունքում սույն հոդվածի 1-ին մասում նշված կարգերի ու կանոնների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում հանձնարարագրի ներկայացման օրը երկու օրինակից կազմվում է հարկային մարմնի սահմանած ձևով արձանագրություն հսկիչ

գնման ընթացքում կատարված խախտումների վերաբերյալ:

Օրենսգրքի 345-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 6-րդ մասով սահմանված խախտումների վերաբերյալ արձանագրության երկու օրինակներն արձանագրությունը կազմելու օրը ներկայացվում են հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Օրենսգրքի 345-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված արձանագրությունը չի կազմվել:

Բացի այդ, Օրենսգրքի 345-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ հսկիչ գնման (գնումների) արդյունքում, հսկիչ գնում իրականացրած հարկային մարմնի պաշտոնատար անձի կողմից հանձնարարագիրը ներկայացվելուց հետո, բայց ոչ ուշ, քան հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքների վերադարձման համար սույն հոդվածի 13-րդ մասում նշված ժամկետները, հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին կամ ապրանքներ մատակարարող (վաճառող), աշխատանքներ կատարող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողին են վերադարձվում հսկիչ գնմամբ (գնումներով) ձեռք բերված ապրանքը (ապրանքները), պայմանով, որ գնումից հետո չեն փոփոխվել դրանց ապրանքային տեսքը և սպառողական հատկանիշները՝ երկու օրինակից կազմելով հարկային մարմնի ղեկավարի սահմանած ձևով ապրանքների հետ ընդունման ակտ:

Քննարկման ընթացքում պարզվեց նաև, որ ստուգման ընթացքում գնված ապրանքը չի վերադարձվել և ապրանքների հետ ընդունման համապատասխան ակտ չի կազմվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ բողոքը ենթակա է բավարարման:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ա/Ձ Արթուր Շամիրյանի դիմում-բողոքը բավարարել՝ անվավեր ճանաչել ՀՀ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 18.05.2018թ. N4101005 ակտը:

Հանձնաժողովի նախագահ



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ